



**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ  
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**



**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**19-Ա**

ք. Երևան

15 ապրիլի 2016թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը  
որոշում է.

1. Հաստատել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի  
հանձնաժողովի 2016-2018 թվականների ռազմավարությունը և դրա  
իրականացման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 և N2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ  
2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն ռազմավարության շրջանակներում ներկայացվում են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (Հանձնաժողով) տեսլականը, առաքելությունը, արժեքները, ռազմավարության նպատակները, ինչպես նաև դրանց իրագործմանն ուղղված միջոցառումները:

Ռազմավարության մշակման համար հիմք են ընդունվել Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը (հաստատված ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 10-ի նիստի թիվ 14 արձանագրային որոշմամբ) և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը:

Ռազմավարության դրույթներն իրացվելու են դրա իրականացման գործողությունների ծրագրով: Ընդ որում, ռազմավարության 1.1.-1.3.-րդ, 2.3.-րդ, 2.5.-րդ, 3.2.-րդ, 3.4.-3.7-րդ և 5.1.-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ներկայացված առաջարկությունների կենսագործման համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության ներգրավվածությունը:

Միաժամանակ, կոռուպցիայի կանխարգելման և հակազդման ուղղությամբ հանրային իրազեկման միջոցառումներն իրականացվելու են Հանձնաժողովի հաղորդակցության ռազմավարությանը համապատասխան:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականությունը կենսագործվում է կանխարգելիչ ինստիտուցիոնալ մոդելի շրջանակներում, որտեղ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը համակարգում և ոլորտային ծրագրերի իրականացման նկատմամբ հսկողություն է իրականացնում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը:

Միաժամանակ, երկրում գործում են մի շարք պետական մարմիններ, այդ թվում՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետական մարմիններում ստեղծված հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովները, որոնք իրենց գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս նպաստում են կոռուպցիայի կանխարգելմանը:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունն իրականացնում են քննչական մարմինները, իսկ քրեական հետապնդումը՝ դատախազությունը, որոնք պատասխանատու են պատժիչ գործառույթի համար:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը սահմանում է Հանձնաժողովի հետևյալ գործառույթները.

ա) բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստրի վարումը, հայտարարագրերի վերլուծությունը և հրապարակումը,

բ) շահերի բախման և էթիկայի կանոնների խախտումների բացահայտումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը իրավասու մարմիններին:

Այդ նպատակով ներդրված է գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը, և նախատեսված է էթիկայի կանոնների խախտմանն ու շահերի բախման կապակցությամբ վարույթ հարուցելու և իրականացնելու Հանձնաժողովի գործառույթը:

Իր գործառույթներն իրականացնելիս Հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու և ստանալու անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, պահանջելու ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անցկացնել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ և ներկայացնել դրանց արդյունքները, անարգել այցելելու ցանկացած պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, ինչպես նաև ծանոթանալու ցանկացած նյութի և փաստաթղթի: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի ուժով ուսումնասիրության ընթացքում հանցագործության հատկանիշներ ի հայտ բերելու դեպքում Հանձնաժողովը բոլոր նյութերը պետք է ուղարկի Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:

Թեև ներկայումս արդյունավետորեն գործում է գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրման համակարգը, որն ապահովում է հայտարարագրման գործընթացի պարզեցումը և հայտարարագրված տվյալների թափանցիկությունն ու հանրային հասանելիությունը, ինչպես նաև կատարվել է ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության բաղադրիչի զարգացմանը և հայտարարագրերում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգմանն ուղղված մեծածավալ աշխատանք, այդուհանդերձ՝ ներդրված համակարգն ամբողջական չէ և բարելավման կարիք ունի: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հայտարարագրման գործընթացը կանոնակարգող դրույթների պահանջները չկատարելու համար իրավական ներգործության միջոցներ<sup>1</sup>, բացակայում են ապօրինի հարստացման խնդրին առնչվող կարգավորումներ, ամբողջական չէ հայտարարագրերի վերլուծության համար անհրաժեշտ գործիքակազմը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված չէ բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրման պարտականությունը (օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին 9-րդ կետով սահմանված է հանրային ծառայողի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը)<sup>2</sup> որպես շահերի բախման բացահայտման հիմնական միջոց: Շահերի բախման իրավիճակների կանխմանն ուղղված օրենսդրական արգելքների խախտման և սահմանափակումների չպահպանման համար իրավական հետևանքները հստակեցված չեն:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոններն, իրենց բովանդակությամբ լինելով ընդհանրական, հնարավորություն չեն տալիս հստակ պատկերացում կազմելու, թե ինչն է ընդունելի կամ անընդունելի հանրային էթիկայի ոլորտում:

<sup>1</sup> Ոլորտային օրենսդրությամբ առանձին խումբ անձանց համար սահմանված է կարգապահական պատասխանատվություն: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված է դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը եկամուտների հայտարարագիր չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում: Բացի այդ, ՀՀ դատական օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ներկայացվող հայտարարագրի պատճենը ուղարկել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանձնաժողովը, ստանալով օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը, եթե գտնում է, որ տեղեկությունները ամբողջական չեն կամ կասկածելի են, կարող է սեփական նախաձեռնությամբ կազմակերպել հարցի քննարկում մասնակից դարձնելով դատավորին: Քննարկման հետևանքները որոշվում են օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, համաձայն որի՝ եթե քննարկման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ: Հակառակ դեպքում, հանձնաժողովը հարուցում է կարգապահական վարույթ:

Միաժամանակ, էթիկայի կանոնների հիման վրա մշակված էթիկայի կանոնագրքերի բացակայությունը թույլ չի տալիս հստակ կանխատեսումներ անել հնարավոր խախտումների, դրանց բնույթի և այդ կապակցությամբ պատասխանատվության համապատասխան միջոցների կիրառման հնարավորության մասին, մինչդեռ պաշտոնատար անձանց վարքագծի կանոնակարգման նպատակով Հանձնաժողովին վերապահված չէ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու, էթիկայի կանոնագրքեր հաստատելու լիազորություն: Հանրային ոլորտում գործող էթիկայի հանձնաժողովների գործունեությունը համակարգող մարմնի բացակայությամբ պայմանավորված ապահովված չէ նաև հանրային էթիկայի ոլորտում քաղաքականության արդյունավետ ինստիտուցիոնալացումը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտման համար ներգործության արդյունավետ կառուցակարգերը բացակայում են:

Արդիական է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման, կոռուպցիայի կանխարգելման գործում միասնական մոտեցումների կիրառման, համատեղ ուսումնասիրությունների, հետազոտությունների իրականացման, էթիկայի կանոնների, շահերի բախման սահմանափակումների չպահպանման դեպքերի բացահայտման և դրանց առնչությամբ քննությունների իրականացման ու պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացում դերերի բաշխման գործում համագործակցությունը որակապես նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտությունը:

## **ՏԵՍԼԱԿԱՆԸ**

Բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց վստահված իշխանությունն օգտագործում են բարեխիղճորեն՝ ի շահ պետության և հասարակության:

## **ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Հանձնաժողովը հանրային էթիկայի համակարգի կարևորագույն մարմին է, որը

- սահմանում է էթիկական վարքագծի չափորոշիչներ և ապահովում դրանց արդյունավետ կիրարկումը.
- ակտիվների հայտարարագրման և շահերի բախման կառավարման համակարգերի միջոցով կանխարգելում է կոռուպցիան.
- նախադրյալներ է ձևավորում բարեվարքության մշակույթի շարունակական զարգացման համար:

## **ԱՐԺԵՔՆԵՐԸ**

Սույն ռազմավարությունը միտված է կենսագործելու հետևյալ հիմնարար արժեքները.

- **Բարեխղճություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչները պարտավոր են հրապարակել իրենց պարտականությունների օբյեկտիվ կատարման հետ բախման մեջ մտնող ցանկացած անձնական շահ, ինչպես նաև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները շահերի բախումից և անհամատեղելի գործունեությունից խուսափելու համար
- **Թափանցիկություն.** իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը
- **Հաշվետվողականություն.** կառավարման բոլոր մակարդակներում հանրային բոլոր ինստիտուտներին կոռուպցիայի նկատմամբ բացարձակ անհանդուրժողականության հստակ ազդակների հասցեագրում: Կառավարման յուրաքանչյուր օղակ պետք է նախաձեռնի, ղեկավարի և վերահսկի կոռուպցիայի կանխարգելման միջոցառումներ՝ գիտակցելով, որ կոռուպցիան հակասում է բարեխղճության և թափանցիկության հիմնարար արժեքներին:

## **ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Խնդիր 1. Հանձնաժողովի՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմնի դերի բարձրացում.**

Միջոցառում 1.1. Հանձնաժողովի կառուցվածքային և գործառնական կարողությունների հզորացում.

Միջոցառում 1.2. Հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների հիման վրա վարքագծի ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու լիազորության վերապահում Հանձնաժողովին:

**Խնդիր 2. Հանրային էթիկայի և շահերի բախման կանխարգելման/կառավարման համակարգի զարգացում**

Միջոցառում 2.1. Հանրային էթիկայի համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը.

Միջոցառում 2.2. Շահերի բախման վերաբերյալ իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը.

Միջոցառում 2.3. Շահերի բախման կանխարգելման և շահերի բախման իրավիճակների կառավարման գործնականորեն կիրառելի կառուցակարգերի ստեղծում.

Միջոցառում 2.4. Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի ընդունում<sup>2</sup>.

Միջոցառում 2.5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի<sup>3</sup> վարքագծի կանոնագրքի ընդունում.

Միջոցառում 2.6. Հանձնաժողովի կողմից մասնագիտական աջակցության տրամադրում հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնող օղակներին (էթիկայի հանձնաժողովներին կամ էթիկայի հարցերով պատասխանատուներին)<sup>4</sup> ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կանոնագրքերի կիրարկման գործընթացում.

Միջոցառում 2.7. Հանրային էթիկայի հարցերով միասնական քաղաքականության իրականացման ապահովում.

Միջոցառում 2.8. Հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և ռիսկային ոլորտներում հետազոտությունների անցկացում, դրանց արդյունքների հիման վրա՝ գործող կառուցակարգերի բարելավման և նոր կառուցակարգերի ներդրման առաջարկությունների մշակում:

### **Խնդիր 3. Հայտարարագրման համակարգի բարեփոխում**

Միջոցառում 3.1. Հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված օրենսդրական առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը.

Միջոցառում 3.2. Գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգից անցում ակտիվների հայտարարագրման համակարգին.

Միջոցառում 3.3. Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման կատարելագործում և ռիսկային չափորոշիչների հիման վրա ավտոմատ վերլուծության համակարգերի համալրում.

<sup>2</sup> Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքների և չափանիշների հիման վրա:

<sup>3</sup> «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց շրջանակի համար:

Միջոցառում 3.4. Միասնական տեղեկատվական տիրույթի ընդլայնում՝ տեղեկատվության հասանելիության և տվյալների անվտանգության ապահովման նպատակով:

Միջոցառում 3.5. Հայտարարագրմանն առնչվող կանոնների խախտումների համար իրավական ներգործության միջոցների սահմանում.

Միջոցառում 3.6. Հայտարարագրված տվյալների անհամապատասխանությունների բացահայտման կառուցակարգերի կատարելագործում.

Միջոցառում 3.7. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի ամրագրում:

#### **Խնդիր 4. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդում**

Միջոցառում 4.1 ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական և համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում.

Միջոցառում 4.2. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցության խորացում և համատեղ ծրագրերի իրականացում:

#### **Խնդիր 5. Հանրային ծառայության առանձին ոլորտներում էթիկայի հարցերով պատասխանատուների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու հանրային ծառայողների կարողությունների զարգացում**

Միջոցառում 5.1. Հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնող կառույցների կարողությունների զարգացում.

Միջոցառում 5.2. Հանրային էթիկային և շահերի բախմանը վերաբերող թեմաներով ուսուցման և վերապատրաստումների կազմակերպում:

#### **Խնդիր 6. Հակակոռուպցիոն կրթություն և վերապատրաստումներ**

Միջոցառում 6.1. Հանրային էթիկայի հարցերով վերապատրաստումների կազմակերպում և անցկացում.

Միջոցառում 6.2. ՀՀ արդարադատության ակադեմիայում, հանրային ծառայողների վերապատրաստում իրականացնող կառույցներում հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի զարգացում:



**Ծ Ր Ա Գ Ի Ր**  
**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ
<b>ԽՆԴԻՐ 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ</b>			
1.1. Հանձնաժողովի կառուցվածքային գործառնական կարողությունների հզորացում <sup>1</sup>	1.1.1. Կոռուպցիայի կանխարգելման մարմինների կազմակերպական կառուցվածքների ու գործառնական վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:
	1.1.2. Հանձնաժողովի աշխատակազմի կառուցվածքի նախագծի մշակում	2016	Նախագիծը ներկայացված է ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին:
	1.1.3. Հանձնաժողովի կառուցվածքային միավորների գործառնականության և խնդիրների նկարագրության նախագծի մշակում	2016	Նախագիծը ներկայացված է ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական

<sup>1</sup> Սույն միջոցառման գործողությունների լիարժեք իրականացումը պայմանավորված է Հանձնաժողովի ֆինանսավորման և աշխատակազմի վերաբերյալ դրույթների օրենսդրական ամրագրման հանգամանքով և համապատասխան օրինադրույթների ուժի մեջ մտնելու ժամկետով:

			աշխատանքային խմբին:
	1.1.4. Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, տրամադրվելիք շենքային պայմանների, գույքի ու սարքավորումների, պահանջարկի հաշվարկի, ինչպես նաև բյուջետային հատկացումների ծախսերի գնահատման նախագծի մշակում	2016	Նախագիծը ներկայացված է ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին:
	1.1.5. Հանձնաժողովի աշխատակազմի ձևավորման հարցերով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենսդրական առաջարկության մշակում	2016	Նախագիծը ներկայացված է ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին:
	1.1.6. Միջնաժամկետ ծախսերի ծրագրային բյուջետավորման հայտի և տարեկան բյուջետային ֆինանսավորման (հայտի) նախագծերի մշակում	2016-2017	Միջնաժամկետ ծախսերի ծրագրային բյուջետավորման հայտի և տարեկան բյուջետային ֆինանսավորման (հայտի) նախագիծը ներկայացված է Կառավարություն:
	1.1.7. Հանձնաժողովի աշխատակազմի կանոնադրության, կառուցվածքի և թվաքանակի ու հաստիքացուցակի հաստատում	2017	Հանձնաժողովի աշխատակազմը՝ որպես պետական կառավարչական հիմնարկ ձևավորված է:
	1.1.8. Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների պաշտոնի անձնագրերի (նկարագրությունների) կազմում, թափուր պաշտոնների հաստիքների մրցույթների անցկացում՝ ըստ պաշտոնի նկարագրությունների	2017-2018	Հանձնաժողովի աշխատակազմը համալրված է:
1.2. Հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների հիման վրա	1.2.1. Վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների սահմանման, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների էթիկայի նորմերի ու կանոնագրքերի կիրարկման գործընթացի՝ Հանձնաժողովի համակարգման գործառույթի	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:

վարքագծի ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու լիազորության վերապահում Հանձնաժողովին <sup>2</sup>	վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն		
	1.2.2. էթիկայի ոլորտում համակարգման գործառույթի իրացման միջազգային մոդելների ներկայացում և քննարկում հանրային ծառայության էթիկայի հարցերով պատասխանատուների և հանձնաժողովների ներկայացուցիչների հետ	2016	Ստացված առաջարկություններն ամփոփված են:
	1.2.3. Հանձնաժողովին՝ ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու լիազորության վերապահման կապակցությամբ առաջարկությունների մշակում	2016	Առաջարկությունները ներկայացված են ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին:
<b>ԽՆԴԻՐ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>			
2.1. Հանրային էթիկայի համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում	2.1.1. Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային էթիկայի համակարգի ուսումնասիրություն, օրենսդրական բացերի և խնդիրների վերհանում	2016	Ամփոփող տեղեկանքը կազմված է:
	2.1.2. Հանրային էթիկայի համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրություն	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:
	2.1.3. Միջազգային չափանիշներին և հանձնարարականներին համապատասխան հանրային էթիկայի համակարգի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում	2016	Առաջարկությունները ներկայացված են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
2.2. Շահերի բախման վերաբերյալ իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված	2.2.1. Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների՝ գործող իրավակարգավորումների բացերի և խնդիրների վերհանում	2016	Ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկանքը կազմված է:

<sup>2</sup> Սույն միջոցառման գործողությունների լիարժեք իրականացումը պայմանավորված է Հանձնաժողովին համապատասխան լիազորություն վերապահելու վերաբերյալ դրույթների օրենսդրական ամրագրման հանգամանքով և համապատասխան օրինադրույթների ուժի մեջ մտնելու ժամկետով:

առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը	2.2.2. Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:
	2.2.3. Միջազգային չափանիշներին և հանձնարարականներին համապատասխան շահերի բախման և գործունեության սահմանափակումների վերաբերյալ առաջարկությունների մշակում	2017	Առաջարկությունները ներկայացված են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
2.3. Շահերի բախման կանխարգելման և շահերի բախման իրավիճակների կառավարման գործնականորեն կիրառելի կառուցակարգերի ստեղծում	2.3.1. Շահերի հայտարարագրման համակարգի ներդրմանն ուղղված օրենսդրական առաջարկության մշակում	2017	Օրենսդրական առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
	2.3.2. Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի համար օրենքով սահմանված գործունեության սահմանափակումների կիրառումը և արգելքների պահպանումն ապահովող ընթացակարգի մշակում	2017	Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի համար օրենքով սահմանված գործունեության սահմանափակումների կիրառումը և արգելքների պահպանումն ապահովող ընթացակարգը մշակված է:
2.4. Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի ընդունում <sup>3</sup>	2.4.1. Հանրային ծառայողի էթիկայի կանոնների համապատասխանեցում Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին և չափանիշներին	2016	Օրենսդրական առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
	2.4.2. Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագծի մշակում	2016	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագիծը մշակված է:

<sup>3</sup> Սույն միջոցառման իրականացումը փոխկապված է 1.2.-րդ կետով նախատեսված միջոցառման հետ:

	2.4.3. Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագծի քննարկում <sup>4</sup>	2017	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագիծը քննարկված է հանրապետական գործադիր իշխանության մարմինների էթիկայի հարցերով պատասխանատուների հետ:
	2.4.4. Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի ընդունում	2017	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքն ընդունված է:
	2.4.5. Վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի մշակում	2018	Ուղեցույցը մշակված է:
2.5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի <sup>5</sup> վարքագծի կանոնագրքի ընդունում	2.5.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների համապատասխանեցում Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին և չափանիշներին	2016	Օրենսդրական առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
	2.5.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագծի մշակում	2016	Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագիրքը մշակված է:
	2.5.3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագծի քննարկում <sup>6</sup>	2017	Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագիծը քննարկված է շահագրգիռ սուբյեկտների հետ:
	2.5.4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի ընդունում	2018	Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագիրքն ընդունված է:

<sup>4</sup> Հանրապետական գործադիր մարմինների մասնակցությամբ:

<sup>5</sup> «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց շրջանակի համար:

<sup>6</sup> Հանրապետական գործադիր մարմինների մասնակցությամբ:

<p>2.6. Հանձնաժողովի կողմից մասնագիտական աջակցության տրամադրում հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն</p>	<p>2.6.1. Հանձնաժողովի կողմից հանրային ծառայության առանձին ոլորտների և հանրապետական գործադիր մարմինների էթիկայի հանձնաժողովներին և էթիկայի հարցերով պատասխանատուներին խորհրդատվության, մեթոդական ցուցումների ու պարզաբանումների տրամադրման կարգի նախագծի մշակում, քննարկում և ընդունում</p>	<p>2017</p>	<p>Հանրային ծառայության առանձին ոլորտների և հանրապետական գործադիր մարմինների էթիկայի հանձնաժողովներին և էթիկայի հարցերով պատասխանատուներին խորհրդատվության, մեթոդական ցուցումների ու պարզաբանումների տրամադրման կարգի նախագիծը մշակված, քննարկված և ընդունված է:</p>
<p>իրականացնող օղակներին (էթիկայի հանձնաժողովներին կամ էթիկայի հարցերով պատասխանատուներին)՝ ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կանոնագրքերի կիրարկման գործընթացում<sup>7</sup></p>	<p>2.6.2. Հանձնաժողովի կողմից հանրային ծառայության առանձին ոլորտների և հանրապետական գործադիր մարմինների էթիկայի հանձնաժողովներին և էթիկայի հարցերով պատասխանատուներին մասնագիտական աջակցության տրամադրում, այդ թվում՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական խորհրդատվության և պարզաբանումների տրամադրում</p>	<p>2017-2018</p>	<p>Հանձնաժողովի կողմից հանրային ծառայության առանձին ոլորտների և հանրապետական գործադիր մարմինների էթիկայի հանձնաժողովներին և էթիկայի հարցերով պատասխանատուներին մասնագիտական աջակցությունը տրամադրված է:</p>
<p>2.7. Հանրային էթիկայի հարցերով միասնական քաղաքականության</p>	<p>2.7.1. Հանձնաժողովի կողմից Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի դրույթների մեկնաբանություն</p>	<p>2018</p>	<p>Հանձնաժողովը մեկնաբանում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի դրույթները:</p>

<sup>7</sup> Սույն միջոցառման իրականացումը փոխկապված է 1.2.-րդ կետով նախատեսված միջոցառման հետ:

իրականացման ապահովում <sup>8</sup>	2.7.2. Միասնական հաշվետվության և վիճակագրության համակարգերի ձևավորում, հաշվետվությունների և վիճակագրական տվյալների հրապարակում	2018	Միասնական հաշվետվության և վիճակագրության համակարգերը ձևավորված են, հաշվետվությունները և վիճակագրական տվյալները հրապարակվում են:
2.8. Հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և ռիսկային ոլորտներում հետազոտությունների անցկացում	2.8.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և հետազոտությունների թեմաների ընտրություն և հաստատում 2.8.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և հետազոտությունների անցկացում, դրանց արդյունքների ամփոփում, առաջարկությունների մշակում	2016          2016-2018	Հանձնաժողովի կողմից հաստատված է ուսումնասիրությունների թեմատիկան:          Ուսումնասիրության արդյունքները հրապարակված են Հանձնաժողովի կայքէջում՝ համապատասխան առաջարկություններով:
<b>ԽՆԴԻՐ 3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ</b>			
3.1. Հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը	3.1.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման գործող համակարգի խնդիրների և օրենսդրական բացերի վերհանում 3.1.2. Ակտիվների հայտարարագրման միջազգային փորձի ուսումնասիրություն 3.1.3. Հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում	2016   2016  2016	Ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկանքը կազմված է:   Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:  Առաջարկությունները ներկայացված են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:

<sup>8</sup> Սույն միջոցառման իրականացումը փոխկապակցված է 1.2.-րդ կետով նախատեսված միջոցառման հետ:

3.2. Գույքի եկամուտների հայտարարագրման համակարգից անցում ակտիվների հայտարարագրման համակարգին	3.2.1. Հայտարարագրման ենթակա տվյալների վերանայում	2017	Առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի և Կառավարություն:
	3.2.2. Հայտարարագրերի ձևաթղթերի և տվյալների միասնականացման ապահովում	2017	Առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի և Կառավարություն:
	3.2.3. Հայտարարատուների ցանկի ընդլայնում	2017	Առաջարկությունը ներկայացված է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի և Կառավարություն:
3.3. Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման կատարելագործում և ռիսկային չափորոշիչների հիման վրա ավտոմատ վերլուծության համակարգերի համալրում	3.3.1. Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի առանձին մոդուլների համապատասխանեցում հայտարարագրմանն առնչվող նոր պահանջներին <sup>9</sup>	2018	Էլեկտրոնային հայտարարագրման մոդուլն արդիականացված է:
	3.3.2. Հանձնաժողովի կողմից հաստատված հայտարարագրերի վերլուծության մեթոդիկայի ռիսկային չափորոշիչների հիման վրա համակարգի ավտոմատ վերլուծության մոդուլի վերազինում <sup>10</sup>	2018	Հայտարարագրերի վերլուծության «ռիսկային չափորոշիչներ» մոդուլի հնարավորությունները ընդլայնված են և համապատասխանեցված մեթոդիկայի պահանջներին:
	3.3.3. Հայտարարագրերի հրապարակման էլեկտրոնային մոդուլի վերազինում <sup>11</sup>	2018	Հայտարարագրերի հրապարակման էլեկտրոնային մոդուլն արդիականացված է:
	3.3.4. Հանձնաժողովի կողմից հաստատված հայտարարագրերի արժանահավատության ստուգման պահանջների հիման վրա համակարգի վերազինում <sup>12</sup>	2018	Հայտարարագրերի վերլուծության էլեկտրոնային համակարգի արժանահավատության ստուգման մոդուլի հնարավորություններն ընդլայնված են:
3.4. Միասնական	3.4.1. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց	2016-2018	Առաջարկությունները ներկայացված են

<sup>9</sup> ՀԲ «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» իրականացման գրասենյակի հետ համատեղ:

<sup>10</sup> ՀԲ «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» իրականացման գրասենյակի հետ համատեղ:

<sup>11</sup> ՀԲ «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» իրականացման գրասենյակի հետ համատեղ:

<sup>12</sup> ՀԲ «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» իրականացման գրասենյակի հետ համատեղ:



տեղեկատվական տիրույթի ընդլայնում՝ տեղեկատվության հասանելիության և տվյալների անվտանգության ապահովման նպատակով	էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.02.2015թ. N 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելուն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում կառավարություն		Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
	3.4.2. Անձնական տվյալների տեղեկատվական բազաներին Հանձնաժողովի հասանելիության տեխնիկական համակցման աշխատանքների կազմակերպում	2016-2018	Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգը համակցված է համապատասխան անձնական տվյալների շտեմարաններին:
3.5. Հայտարարագրման ն առնչվող կանոնների խախտումների համար իրավական ներգործության միջոցների սահմանում	3.5.1. Ակտիվների հայտարարագրմանն առնչվող խախտումների համար ներգործության միջոցների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:
	3.5.2. Հայտարարագրման ոլորտում խախտումների համար պատասխանատվության սահմանման հետ կապված առաջարկությունների մշակում և ներկայացում	2016	Առաջարկությունները ներկայացված են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:
3.6. Հայտարարագրված տվյալների անհամապատասխանությունների բացահայտման կառուցակարգերի կատարելագործում	3.6.1. Հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության և արժանահավատության ստուգման մեթոդիկայի մշակում	2016	Համապատասխան մեթոդիկան հաստատված է:
	3.6.2. Հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության և արժանահավատության ստուգման հիման վրա անհամապատասխանությունների բացահայտում	2018	Ըստ ռիսկերի, անհամապատասխանությունների քանակ
3.7. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ստուգված	3.7.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ	2016	Միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը կազմված է:

<p>հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի ամրագրում</p>	<p>բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն</p> <p>3.7.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի օրենսդրական ամրագրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում</p>	<p>2017</p>	<p>Առաջարկությունները ներկայացված են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և Կառավարություն:</p>
<p><b>ԽՆԴԻՐ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՈՒՄ</b></p>			
<p>4.1. ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական և համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում</p>	<p>4.1.1. ՀՀ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական և համայնքային հիմնարկների հետ համագործակցության հուշագրերի կնքում</p>	<p>2017-2018</p>	<p>Համագործակցության հուշագրերը կնքված են:</p>
	<p>4.1.2. Հայտարարագրերի վերլուծության արդյունքներով իրավապահ մարմիններին տվյալների փոխանցման ընթացակարգի սահմանում և տվյալների տրամադրում</p>	<p>2018</p>	<p>Ընթացակարգը հաստատված է և ըստ սահմանված ռիսկային չափորոշիչների տվյալները տրամադրվում են:</p>
	<p>4.1.3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, դատավորների, դատախազների էթիկայի համապատասխան հանձնաժողովների հետ համագործակցության հուշագրերի կնքում</p>	<p>2017-2018</p>	<p>Համագործակցության հուշագրերը կնքված են:</p>
<p>4.2. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցության խորացում և համատեղ ծրագրերի իրականացում</p>	<p>4.2.1. ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի, ԳՌԵԿՈ-ի և այլ միջազգային հակակոռուպցիոն կառույցների մոնիթորինգի զեկույցներում Հանձնաժողովին և պաշտոնատար անձանց էթիկայի համակարգին վերաբերող տեղեկանքների, հարցաշարերի պատասխանների ու հանձնառությունների կատարման վերաբերյալ առաջընթացի զեկույցների պատրաստում</p>	<p>2016-2018</p>	<p>Հանձնաժողովի իրավասություններին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրված է իրավասու մարմիններին:</p>

	4.2.2. «Ինտեգրված փորձագետ» ծրագրի շրջանակներում էթիկայի, շահերի բախման և հայտարարագրման համակարգերի զարգացման հարցերով միջազգային փորձագետի ներգրավում <sup>13</sup>	2016-2018	Ինտեգրված փորձագետի հետ կնքված է պայմանագիր:
	4.2.3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի իրավասությանն առնչվող հարցերով օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, միջազգային փորձագետների հետ համատեղ քննարկումների կազմակերպում և անցկացում	2016-2018	Տարբեր ձևաչափերով քննարկումներն անցկացված են:
<b>ԽՆԴԻՐ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>			
5.1. Հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնող կառույցների կարողությունների զարգացում	5.1.1. Հանձնաժողովի աշխատակազմի ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և անցկացում	2018	Հանձնաժողովի աշխատակազմի ծառայողները անցել են վերապատրաստում:
	5.1.2. Հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնող պատասխանատուների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում և անցկացում	2018	«Հանրային էթիկա» թեմայով վերապատրաստվել են հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնող պատասխանատուները:
	5.1.3. Միջազգային փորձագետների ներգրավմամբ օտարերկրյա իրավասու կառույցների հետ համագործակցության շրջանակներում փորձի փոխանակման ծրագրերի իրականացում	2017-2018	Փորձի փոխանակման ծրագրերն իրականացվում են:

<sup>13</sup> Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

5.2. Հանրային էթիկային և շահերի բախմանը վերաբերող թեմաներով ուսուցման և վերապատրաստումների կազմակերպում	5.2.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար հանրային էթիկային և շահերի բախմանը վերաբերող թեմաներով դասընթացների կազմակերպում և անցկացում, այդ թվում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ	2017-2018	Յուրաքանչյուր տարի «Հանրային էթիկա» թեմայով վերապատրաստվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց առանձին խմբեր
	5.2.2. Հանրային ծառայողների համար հանրային էթիկային և շահերի բախմանը վերաբերող թեմաներով դասընթացների կազմակերպում և անցկացում, այդ թվում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ	2017-2018	Յուրաքանչյուր տարի «Հանրային էթիկա» թեմայով վերապատրաստվում են հանրային ծառայողներ:
<b>ԽՆԴԻՐ 6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ</b>			
6.1. Հանրային էթիկայի հարցերով վերապատրաստումների կազմակերպում և անցկացում	6.1.1. Վերապատրաստման «Հանրային էթիկա» թեմայով մոդուլային ծրագրի մշակում	2017	Վերապատրաստման «Հանրային էթիկա» թեմայով մոդուլային ծրագիրը մշակված և փորձարկված է:
	6.1.2. «Հանրային էթիկա» թեմայով դասավանդման ուղեցույցի մշակում	2017	Դասավանդման ուղեցույցը մշակված և փորձարկված է:
	6.1.3. Վերապատրաստման «Հանրային էթիկա» թեմայով մոդուլային ծրագրի շրջանակներում վերապատրաստողների վերապատրաստման անցկացում	2017-2018	Վերապատրաստման «Հանրային էթիկա» թեմայով մոդուլային ծրագրի շրջանակներում վերապատրաստողների թիմը ձևավորված է:
6.2. ՀՀ արդարադատության ակադեմիայում, հանրային ծառայողների վերապատրաստում	6.2.1. ՀՀ Արդարադատության ակադեմիայում «Հանրային էթիկա» վերապատրաստման դասընթացի կազմակերպում <sup>14</sup>	2017	«Հանրային էթիկա» վերապատրաստման դասընթացի ծրագիրը հաստատված է Արդարադատության ակադեմիայի ղեկավարության կողմից և ներառված է վերապատրաստման ծրագրում:

<sup>14</sup> ՀՀ Արդարադատության ակադեմիայի հետ համատեղ:

իրականացնող կառույցներում հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի զարգացում	6.2.2. Բարձրագույն ուսումնական հաստատություններում բաց դասախոսությունների կազմակերպում	2017-2018	Բարձրագույն ուսումնասիրական հաստատություններում հանրային էթիկային, շահերի բախմանը և հայտարարագրման համակարգին առնչվող թեմաներով անցկացված են բաց դասախոսություններ:
	6.2.3. Հանձնաժողովում պրակտիկա անցնելու հնարավորության ընձեռում	2017-2018	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում ուսումնական պրակտիկա են անցնում բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրոսական կրթական ծրագրի 2 մագիստրանտ: